ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 26.12.2002

Հոդված 1. Ընդունել ի գիտություն, որ՝

1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի համախմբված բյուջեն կկազմի՝

ա) եկամուտների գծով՝ 337.9 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի).

բ) ծախսերի գծով՝ 385.2 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների).

գ) դեֆիցիտը՝ 47.3 մլրդ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության համայնքների 2003 թվականի բյուջեները կկազմեն՝

ա) եկամուտների գծով՝ 22.0 մլրդ դրամ (ներառյալ՝ պետական բյուջեից ստացվող պաշտոնական տրանսֆերտները).

բ) ծախսերի գծով՝ 22.0 մլրդ դրամ:

Հոդված 2. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեն՝

	հազար դրամներով
1. Եկամուտների գծով	286,979,798.0
2. Ծախսերի գծով	334,238,598.0
3. Դեֆիցիտը	47,258,800.0

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի ծածկմանն ուղղել հետեւյալ միջոցները՝

	հազար դրամներով
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	**47,258,800.0**
այդ թվում՝	
Ա.Ներքին աղբյուրներ	**1,317,501.9**
այդ թվում	
1.Պետական արժեթղթեր	**2,000,000.0**
2.Մուրհակների մարում	**(575,498.1)**
5.«Հայաստան» համահայկական հիմնադրամից ստացված փոխատվության մարում	
6.Պետական ներքին շահող փոխատվության պարտատոմսերի ետ գնում	
3.Ներքին այլ աղբյուրներ	**(107,000.0)**
Բ. Արտաքին աղբյուրներ	**45,941,298.1**
այդ թվում	
1.Միջազգային կազմակերպությունների միջոցներ	**45,960,276.7**
այդ թվում՝	
ա) վարկերի ստացում	**55,360,855.1**
որից՝	

1.SAC-IV	
2.SAC-V	23,456,000.0
3.Նպատակային այլ վարկեր	31,904,855.1
որից՝	
3.1.Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Ռոզման համակարգի զարգացման ծրագիր	3,302,780.6
3.3.Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող գյուղատնտեսական ծառայությունների ծրագիր	3,271,584.2
3.4.Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագիր	700,636.6
3.5.Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Կրթության որակի եւ համապատասխանության կանխավճարի ծրագիր	757,101.0
3.6.Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Առողջապահության ֆինանսավորման եւ առողջության առաջնային պահպանման ծրագիր	501,254.7
3.7.Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Համայնքային զարգացման ծրագիր	6,085,600.6
3.8.Վերակառուցման եւ զարգացման Եվրոպական բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Հրազդանի 5 -րդ բլոկի կառուցման ծրագիր	146,600.0
3.9.Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Էլեկտրահաղորդման գծերի եւ բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիր	1,314,239.7
3.10.Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Անշարժ գույքի գրանցման ծրագիր	792,402.3
3.11. Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Տրանսպորտի ծրագիր	6,946,902.5
3.12.Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Պատվարների անվտանգության ծրագիր	2,537,939.2
3.13.Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագիր	2,103,827.3
3.14.Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Դատահիրավական բարեփոխումների ծրագիր	1,421,609.5
3.15. Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Համայնքային ջրամատակարարման եւ ջրահեռացման ծրագիր	461,672.7
3.16. Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Ձեռնարկությունների ինկուբատորի ծրագիր	1,134,684.6
3.17. Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Օտարերկրյա ներդրումների եւ արտահանման խթանման ծրագիր	194,391.6
3.18. Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող բնական պաշարների կառավարման եւ չքավորության նվազեցման ծրագիր	172,988.0
3.19. Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող քաղաքային գազամատակարարման ծրագիր	58,640.0
որից	
- Ինստիտուցիոնալ բարեփոխումների վարկ	(333,075.2)
- Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ բլոկի ծրագիր	(3,369,454.4)
- Եվրոմիություն 58 մլն. ECU	(4,094,244.8)
- Աղետի գոտի	(196,444.0)
- Կարգո տերմինալ	(1,407,360.0)
բ) վարկերի մարում	(9,400,578.4)
2.Օտարերկրյա պետությունների միջոցներ	10,587,358.4
այդ թվում՝	
ա) վարկերի ստացում	13,738,085.6
այդ թվում՝	

1.Նպատակային վարկեր	**13,738,085.6**
որից՝	
1.1 Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված միջոցներով իրականացվող էլեկտրահաղորդման գծերի եւ բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիր	**5,662,982.1**
1.2.Գերմանիայի կառավարության զարգացման վարկերի բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող էներգետիկային անհապաղ օգնություն. Քանաքեռ ՀԷԿ-ի վերականգնման ծրագիր	**1,817,840.0**
1.3.Գերմանիայի կառավարության զարգացման վարկերի բանկի կողմից տարամդրված միջոցներով իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագիր	**3,091,524.5**
1.4.Գերմանիայի կառավարության զարգացման վարկերի բանկի կողմից տարամդրված միջոցներով իրականացվող Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման եւ կոյուղու համակարգերի վերականգնման ծրագիր	**3,165,739.0**
բ) վարկերի մարում	**(3,150,727.2)**
որից՝	
- Թուրքմենստան (գազի առաքումների դիմաց ձեւակերպված վարկ)	**(2,137,428.0)**
- Ռուսաստան (98.3 մլրդ ՌԴ ռուբլի)	
- Ռուսաստան (2 մլրդ ՌԴ ռուբլի)	
- Ռուսաստան (400 մլն ՌԴ ռուբլի)	
- Ռուսաստան (73.7 մլն դոլար վերաձեւակերպում)	
- Ռուսաստան (5.3 մլրդ ՌԴ ռուբլի)	
-ԱՄՆ	**(1,013,299.2)**
3.Այլ արտաքին աղբյուրներ	**(10,606,337.0)**
որից՝	
ա) վարկերի մարում	**(10,606,337.0)**

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում ձեռնարկել միջոցներ 2003 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ սղաճի չափը 2002 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ մինչեւ **3.0 տոկոս** պահելու ուղղությամբ:

Հոդված 5. Սահմանել, որ՝

1) 2004 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության փոխադարձ զուտ պարտավորությունների տարեկան չափաքանակը կազմելու է **8,350.0 մլն դրամ** : Պարտավորությունների նշված սահմանաքանակը կարող է գերազանցվել միայն եռամսյակների ընթացքում՝ եռամսյակի վերջում պահպանելով մինչեւ **8,350.0 մլն դրամի** մակարդակը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության պարտավորությունների գերազանցումը եռամսյակի ընթացքում չի կարող լինել ավելի, քան նախորդ եռամսյակում հավաքագրված աճողական հարկային եկամուտների **10 տոկոսը** .

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության պարտավորությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվեկշռի ստորեւ ներկայացվող պահանջների եւ պարտավորությունների տարբերությամբ՝

ա) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պահանջները Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ՝

- Հայաստանի Հանրապետության կառավարությանը տրված վարկեր,

- Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր.

բ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պարտավորությունները Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության հաշիվներ,

- Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնության հաշիվներ,

- ծրագրերի իրագործման գրասենյակների հաշիվներ,

- Հայաստանի Հանրապետության կառավարության ցպահանջ ավանդներ,

- Հայաստանի Հանրապետության կառավարության ժամկետային ավանդներ,

- Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշիվ.

3) 2003 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը համապատասխան միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ բանակցությունների արդյունքների հիման վրա կձեռնարկի միջոցներ՝ ֆինանսական կազմակերպությունների հետ միջազգային համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված բոլոր միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով ապահովելու ուղղությամբ:

Հոդված 6. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի եկամուտները, ըստ առանձին եկամտատեսակների, հետեւյալ չափերով՝

	հազար դրամներով
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	**286,979,798.0**
այդ թվում՝	
I. ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**226,027,693.0**
որից՝	
Ա. ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**225,592,267.0**
այդ թվում՝	
1.Հարկային եկամուտներ	**207,597,316.0**
այդ թվում՝	
ա) ավելացված արժեքի հարկ	103,173,673.0
- ձեռնարկություններից եւ կազմակերպություններից	96,638,016.0
- անհատ ձեռներեցներից	6,535,657.0
բ) շահութահարկ	21,838,209.0
գ) եկամտահարկ	14,709,012.0
այդ թվում՝	
- աշխատանքային եւ քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտներից	12,926,411.0
- ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից	744,125.0
- փայամասնակցություններից, արժեթղթերից եւ ավանդներից ստացված եկամուտներից	364,832.0
- այլ եկամուտներից	673,644.0
դ) ակցիզային հարկ	39,241,084.0
- Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ենթակցիզային ապրանքների արտադրանքից	13,052,306.0
- Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթակցիզային ապրանքներից	26,188,778.0
ե) գույքահարկ	86,302.0
զ) հողի հարկ	5,523.0
է) մաքսատուրք	11,817,131.0
- ներմուծվող ապրանքների արժեքներից	11,817,131.0
ը) հաստատագրված վճարներ	7,190,066.0
թ) բնօգտագործման եւ բնապահպանական վճարներ	4,303,354.0

ժ) պարզեցված հարկ	4,195,762.0
ժա) այլ հարկային եկամուտներ	1,037,200.0
2. Պետական տուրք	**12,826,684.0**
այդ թվում՝	
- դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, գանգատների, դատարանների վճիռների դեմ տրվող վճռաբեկ գանգատների համար, ինչպես նաեւ դատարանների կողմից փաստաթղթերի պատճեններ տալու համար	504,229.0
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար	6,120.0
-հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար	1,460,425.0
- պետական գրանցման համար	2,586,110.0
- մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար	41,025.0
- գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող	159,317.0
- ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար	1,502,709.0
- լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար	1,565,395.0
- այլ ծառայությունների կամ գործողությունների համար	5,001,354.0
3. Ոչ հարկային եկամուտներ	**5,168,267.0**
այդ թվում՝	
ա) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքեր	980,000.0
բ) պետական մարմինների, դրանց ենթակա բյուջետային հիմարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտներ	284,757.0
այդ թվում՝	
- պետական ձեռնարկությունների ու գույքի վարձակալության եւ օգտագործման վարձավճարներ	231,665.0
- պետական պահուստի հողերի վարձակալության եւ օգտագործման վարձավճարներ	53,092.0
գ) դիվիդենտներ եւ շահաբաժիններ	449,150.0
այդ թվում՝	
- բանկերում եւ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեների ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից եւ դեպոզիտներից ստացված շահաբաժիններ, դիվիդենտներ	100,000.0
- բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ	349,150.0
դ) պետության տված վարկերի օգտագործման դիմաց վճարներ՝ (տոկոսներ)	922,431.0
այդ թվում՝	
- ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարներ	525,167.0
- ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարներ	397,264.0